# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

« 26 » դեկտեմբեր 2024թ. No 7581 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/3639-24 առ 17.12.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի դեկտեմբերի « 26 » - ի N 7581- Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման (ԵԱՏՄ գրանցում, ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տաղեքսիմ | տադալաֆիլ | դեղահատեր թաղանթապատ | 5մգ; (14/1x14/) բլիստերում, (28/2x14/) բլիստերում | Սևերնայա Զվեզդա ՓԲԸ, Լենինգրադի մարզ, Վսևոլոժսկի մունիցիպալ շրջան, Կուզմոլովսկի քաղ. բն., Կուզմոլովսկ, Զավոդսկայա փ.,տ. 4, թ. 1- բաց թողնման հսկող, Սևերնայա Զվեզդա ՓԲԸ, Լենինգրադի մարզ, Վսևոլոժսկի մունիցիպալ շրջան, Կուզմոլովսկի քաղ. բն., Կուզմոլովսկ, Զավոդսկայա փ.,տ. 4, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Ռուսաստան | Իմմունոֆարմ ՍՊԸ, 0014, Երևան, Հրաչյա Ներսիսյան փ., 10-3/1 շենք | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22562 (012334) 16.12.2024 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Տադեքսիմ | տադալաֆիլ | դեղահատեր թաղանթապատ | 20մգ; (2/1x2/) բլիստերում, (4/1x4/) բլիստերում | Սևերնայա Զվեզդա ՓԲԸ, Լենինգրադի մարզ, Վսևոլոժսկի մունիցիպալ շրջան, Կուզմոլովսկի քաղ. բն., Կուզմոլովսկ, Զավոդսկայա փ.,տ. 4, թ. 1- բաց թողնման հսկող, Սևերնայա Զվեզդա ՓԲԸ, Լենինգրադի մարզ, Վսևոլոժսկի մունիցիպալ շրջան, Կուզմոլովսկի քաղ. բն., Կուզմոլովսկ, Զավոդսկայա փ.,տ. 4, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Ռուսաստան | Իմմունոֆարմ ՍՊԸ, 0014, Երևան, Հրաչյա Ներսիսյան փ., 10-3/1 շենք | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22563 (012334) 16.12.2024 |